

ԵՄ կլիմայի փոփոխության քաղաքականությունը



ԵՄ կլիմայի փոփոխության քաղաքականությունը

- Կլիմայի փոփոխությունը մարդկությանն ուղղված ամենալուրջ մարտահրավերներից մեկն է:
- ԵՄ-ն աշխատում է համընդհանուր համաձայնության վրա ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնելու համար և առաջատար է այդ ճանապարհին իր իսկ հստակ գործողություններով:

Արտանետումների կրճատմանն ուղղված միջոցառումների փաթեթը



- 2008թ.-ի դեկտեմբերին ընդունված միջոցառումների փաթեթում ներառված նպատակները.
- պակասեցնել ջերմոցային գազերի արտանետումները մինչև 2020 թվականը նվազագույնը 20%-ով
- ավելացնել վերականգնվող էներգիայի մասնաբաժինը շուկայում նվազագույնը 20%-ով
- կրճատել էներգիայի ընդհանուր սպառումը 20%-ով
- համաձայնություն է ձեռք բերվել, որ տրանսպորտային վառելիքի 10%-ը բաղկացած լինի բիո-վառելիքից՝ էլեկտրականություն և հիդրոգեն

Կիոտոյի արձանագրությունը և Եվրոպական Միությունը



- Կիոտոյի համաձայնագիրը կնքվել է 1997թ.-ին: Այն զարգացած աշխարհի համար որպես նպատակ է սահմանում ջերմոցային գազերի արտանետումների նվազեցումը մինչև 5,2%-ով 1990-ից 2012 թվականների միջև:
- 15 պետություն, որոնք այդ ժամանակ Եվրոպական Միության անդամ էին ավելի առաջ շարժվեցին՝ պարտավորվելով արտանետումները կրճատել 8%-ով:

Արտանետումների առևտրի համակարգը որպես ԵՄ կլիմայի փոփոխության ռազմավարության անկյունաքար



- Այս համակարգի շրջանակներում ԵՄ կառավարությունները սահմանում են էներգիայի մեծ սպառում ունեցող արդյունաբերությունների կողմից /օրինակ՝ էներգիայի արտադրություն, պողպատի և ցեմենտի արտադրություն/ կարբոն-դիօքսիդի արտանետման չափաքանակներ:
- Եթե այս ձեռնակությունները ցանկանում են արտանետել ավելի CO₂ քան իրենց չափաքանակն է, ապա նրանք պետք է չափաբաժնի թույլատվություն զնեն ավելի արդյունավետ գործող ընկերություններից:

Տնտեսական աճի և ջերմոցային գազերի արտանետումների միջև առկա կապի ընդհատումը



- Մինչդեռ ԵՄ տնտեսությունը 1990 - 2006 թվականների միջև տնտեսական աճ է ունեցել, նրա 27 անդամ պետությունների արտանետումները նվազել են 10,8%-ով:
- 15 «հին» պետությունների (ԵՄ-15) արտանետումների նվազումը կազմել է 2,7%: Սա խրախուսող է, սակայն հարկավոր է ավելին անել ԵՄ-15-ի շրջանակներում 2012թ.-ին նախանշված արտանետումների 8% կրճատման նպատակակետին հասնելու համար:

Վերականգնվող էներգիայի հավակնոտ քաղաքականությունը



- ✓ Վերականգնվող էներգիայի խրախուսումը փոխարինում է հանածո վառելանյութի սպառմանը:
- ✓ Այն ավելի բազմազան է դարձնում էներգիայի աղբյուրները և նպաստում էներգիայի պաշար ապահովելուն
- ✓ Այն նաև նպաստում է նոր արդյունաբերությունների տեխնոլոգիաների զարգացմանը:

Մենք և մեր շրջական միջավայրը



- ✓ Կլիմայի փոփոխության դեմ պայքարը մարտահրավեր է յուրաքանչյուրի և բոլորիս համար:
- ✓ Ի՞նչ ներդրում կարող է ունենալ Հայաստանը այդ մարտահրավերի հաղթահարման գործում:
- ✓ Առաջին հերթին հարկավոր է ունենալ դեպի մաքուր և կանաչ շրջակա միջավայրը հակված մտածելակերպ: